ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

27 փետրվարի 2014 թվականի N 14-Ա

ք. Հրազդան

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 167-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2013 թվականի նոյեմբերի 29-ի N 125-Ա կարգադրությունը, ինչպես նաև *Գ. Մարտիրոսյանի* անձնական դիմումը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ *Գայանե Մարտիրոսյանին* տրամադրել 2012 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործած մասը և լրացուցիչ արձակուրդը՝ 14 աշխատանքային օր՝ 2014 թվականի մարտի 5-ից մինչև մարտի 24-ը ներառյալ:

2. *Գայանե Մարտիրոսյանի* արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ *Վանիկ Հունանյանի* վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ